ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ԿՈՒՅՄՃՅԱՆ (Փարիզ)

Թեև հայկական ձեռագրերի գրացուցակավորումը (կատալոգիզացիան) և ուսումնասիրությունը XIX դարում արագորեն առաջընթաց են ապրել՝ ինչպես տեքստերին, այնպես էլ դրանց մանրանկարներին վերաբերող հարցերում, սակայն մինչև այժմ շատ քիչ ուշադրություն է դարձվել կոդիկոլոգիային*, ուստի ձեռագրերի ուսումնասիրությունն այդ տեսակետից տուժել է։ Ներկա հաղորդումը կանգ է առնում կաշվե կազմերի մի փոքր, յուրահատուկ խմբի վրա, որոնք ունեն հայերեն մակագրություններ։

Չնայած ժամանակակից տեխնոլոգիան կիրառվում է կոդիկոլոգիական նպատակներով, բայց հայկական ձեռագրերի ուսումնասիրության համար այն քիչ է օգտագործվում։ Ամենանշանակալից աշխատությունը, որ մինչ այժմ հրատարակվել է, վերաբերում է հայկական մանրանկարներում օգտագործված գունանյութերի լուսապատկերագրական վերլուծությանը[1]։ Սակայն նույնիսկ այդ աշխատանքը չի շարունակվել այլ ուսումնասիրողների կամ հետազոտական ինստիտուտների կողմից։ Ձեռագրերի պատրաստման, դրանց կառուցվածքի, մագաղաթի կամ թղթի, տողման, կարման, տետրերի և կազմերի ուսումնասիրությունը կամ դեռ չի սկսվել, կամ դեռևս գտնվում է սաղմնային փուլում։

Գուցե ավելորդ է ընդգծել, որ կան համարյա նույնքան հայկական կազմեր, որքան և ձեռագրեր։ Սակայն նրբորեն զարդարված կաշվե կազմերը քիչ են ուսումնասիրվել։ Ոչ մի նշանակալից մենագրություն հայկական կազմերի վերաբերյալ չի հրատարակվել[2]։ Ոչ մի հատուկ ցուցահանդես դրանց չի նվիրվել։ Եղել են միայն սակավաթիվ հոդվածներ դրանց մասին, որոնցից կարևորագույններն են Ֆրեդերիկ Մակլերի[3], Գարեգին Հովսեփյանի[4], Բերթ վան Ռեգեմորտերի[5] և Բարկեն Առաքելյանի[6] հոդվածները։

1978 թ. պրոֆեսոր Գի Պեթերբրիջը՝ Կոլումբիայի համալսարանից, և ես հետազոտեցինք և լուսանկարեցինք Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան հայրերի հավաքածոյի կարևորագույն կազմերը։ Այդ աշխատանքի արդյունքը եղավ այն, որ մենք պատրաստեցինք մի հատուկ տեղեկամատյան (որտեղ թվարկվում են հայկական կազմի առանձնահատկությունները) երկու խմբագրությամբ, մեկը՝ մի էջանոց, որը նախատեսված է արագ աչքի անցկացնելու համար, իսկ մյուսը՝ շատ մանրամասն, բաղկացած չորս էջից, որը նախատեսված է կազմի և կոդիկոլոգիայի մասնագետների համար[7]։

4000 ձեռագրերի մի հավաքածոյի 750 կարևորագույն կազմերը ցուցակագրվել են մեր «Հայկական կազմի առանձնահատկությունները ներկայացնող ձեռագրերի նախնական ցուցակում»[8]։ Այս վերջին խմբի մաս կազմող և դրոշմված մակագրություններ կրող յոթ կաշվե կազմեր եղել են մեր նախորդ հաղորդման թեման[9]։ Նման կազմեր համեմատաբար հազ-

---

* Կոդիկոլոգիա (լատին. codex-ից), օժանդակ գիտություն, որն ուսումնասիրում է ձեռագրերի պատրաստման պատմությունը, նրանց կառուցվածքը և ճակատագիրը (ծան. թարգմանչի)։

վաղեպ են, քանի որ ցուցակագրված խմբի բոլոր կազմերի 1 տոկոսից պակաս մասն են, իսկ Վենետիկում գտնվող բոլոր կազմերի միայն 0,2 տոկոսն են։ Թվագրված լինելու շնորհիվ, դրանք ստույգ ինֆորմացիա են ընձեռում իրենց կազմերի տարբեր մասերի՝ կառուցվածքի, կաշվի, զարդարման, գործվածքե աստառի ժամանակագրության մասին։

Կա թվագրված կազմերի մեկ այլ տեսակ, որ կարելի է ավելացնել մակագրություններով կաշվե կազմերի խմբին. խոսքը վերաբերում է արծաթե քանդակազարդ պահպանակներով օժտված կազմերին և կամ նրանց, որոնք ունեն արծաթից կամ որևէ ավելի էժան մետաղից զարդարանքներ[10]։ Սրանց վրա ևս հաճախ կան մակագրություններ և տարեթվեր։ Եվ քանի որ այդ արծաթե թիթեղների մեծ մասն ավելացվել է այն բանից հետո, երբ տախտակները պատվել են կաշվով, այդ մակագրությունների տարեթվերը նույնպես օգտակար են՝ կաշվե կազմերի մի ժամանակագրություն կազմելու համար։ Նման արծաթե թիթեղներ կամ նման կազմեր՝ զարդարված զանազան մետաղներից խաչերով, որոնք ամրացված են դրանց, շատ ավելի բազմաթիվ են, քան մակագրություններով կաշվե կազմերը, հետևաբար չեն կարող տեղ գտնել այս հոդվածում[11]։

Բարեբախտաբար, հայկական կազմարարական արվեստին վերաբերող ստույգ և մանրամասն տեղեկությունները չեն սահմանափակվում միայն նրանցով, որ կարելի է քաղել մետաղյա ամրացված թիթեղների կամ հենց իրենց՝ կազմերի վրայից։ Հայ արհեստավորների սովորությունը՝ իրենց անձնական հիշատակարանը թողնելու ձեռագրերում և այլ առարկաների վրա, մեզ տրամադրում է դեռևս չհետազոտված տվյալների մի առատ զանգված՝ կազմերի ուսումնասիրության համար։ Հայկական ձեռագրերի ձեռագրացուցակների ընդհանուր տեսությունը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ պահպանվել են տարբեր արժեք և նշանակություն ունեցող հազարից ավելի հիշատակարաններ կամ կազմարարների անունների վկայակոչումներ։ Դրանք կարելի է թվագրել X—XIX դդ.[12]։

Հայկական կազմարարական տեխնիկան, ինչպես և հունականը կամ ատորականը, կոդեքսի* ստեղծման ընթացքում հետևում էր զպտի կազմարարների կողմից կիրառվող կանոններին։ Զպտիների, իսկ ավելի ուշ՝ մահմեդական կազմարարների կողմից օգտագործված սառը եղանակով դրոշմազարդման տեխնիկան միաձուլվել է հայ արհեստավորների հմտությանը։ Սակայն ինչպես և արվեստի մյուս բնագավառներում, այս ասպարեզում ևս Հայաստանն ընթացել է իր սեփական ուղիով, և է՛լ ավելի յուրահատուկ կերպով՝ կաշվի զարդարման ասպարեզում։ Պահպանված կաշվե կազմերից հնագույնները XI դարից են[13], իսկ կազմարարների ամենահին հիշատակարանները թվագրվում են X—XI դդ.[14]։ Այս ժամանակաշրջանում է, որ կազմարարությունը դարձել է մասնագետների գործ և շատ է զարգացել միջնադարյան Հայաստանում։ Նրբորեն զարդարված կազմերը ստեղծվում էին այն գեղարվեստական միտումների հետևողությամբ, որոնք այդ ժամանակ գերիշխող էին Հայաստանում, օրինակ, նրանց, որոնք կիրառվում էին խաչի տեսքով տապանաքարերի, այսինքն՝ խաչքարերի զարդարման մեջ։

Հին հայկական կազմերի ամենաբնորոշ դեկորատիվ մոտիվն իրենից ներկայացնում է վերի կողի վրա հմտորեն միահյուսված գծերով կազմված մի խաչ, որը տեղադրված է աստիճանավոր պատվանդանին, իսկ վարի կողի վրա՝ մի ուղղանկյուն, որն իր մեջ ամփոփում է նույնպես հյուսածո մոտիվներ, և որի նշանակությունը դեռևս չի լուսաբանված[15]։ Այս հյուսածո խաչին

---

* Կոդեքս (լատին. codex), հին Հռոմում գոյություն ունեցած գրքի ձև՝ միմյանց ամրացված մոմած տախտակներից, պապիրուսի թերթերից կամ մագաղաթից. հետագայում տարածում է գտել և այլ երկրներում։ Ժամանակակից գիրքը շարունակում է պահպանել կոդեքսի ձևը (ծան. թարգմանչի)։

տրված նախապատվության մասին է վկայում վերջինիս առկայությունը X—XIII դդ. բազմաթիվ ձեռագրերի մանրանկարներում[16]։ Կարելի է գտնել ևս մի մոտիվ՝ բարդ երկրաչափական վարդյակ, որը թվագրվում է XII դարի վերջով։ Դրա ներշնչման աղբյուրն, անկասկած, հանդիսացել են հին զրպտիական կազմերը[17]։

Սակայն զարդարանքը չէր սահմանափակվում սոսկ այս մոտիվներով։ Օգտագործվում էր երկրաչափական, իսկ ավելի ուշ՝ նաև ծաղկային ձևերի մի մեծ բազմաղանություն, ինչպես նաև ավանդական հյուսածո ժապավենները։ Մետաղյա, հաճախ արծաթյա, գամերի առկայությունը՝ որևէ մոտիվ ընդգծելու համար, նույնպես բնորոշ էր հայկական արվեստին[18]։ Կիրառվում էին զանազան դրոշմամամլիչներ՝ գիլյոշներ*, փոքրիկ օվալներ, կրկնակի օվալներ, կետեր, փոքր վարդյակներ, սակայն, ի հակադրություն հունական ավանդույթի, կենդանական կամ թռչնային մոտիվներ ներկայացված չէին։ Բոլորածալքերը հաճախ զարդարվում էին, իսկ երբեմն նաև կաշվի այն ծայրերը, որ ներսի կողմից տախտակների վրա էին ծալված։ Զարգացան տարբեր ոճեր, ինչպիսիք էին Ղրիմի ոճը[19] կամ Նոր Ջուղայինը։ Որոշ կենտրոններ, ինչպես Նոր Ջուղայինը, հակված են եղել դեպի արևմտյան դեկորատիվ արվեստը, մինչդեռ նրանք, որոնք շատ հեռու էին օտարերկրյա ճանապարհորդների կամ վաճառականների հետ որևէ շփումից, ինչպես Տաթևի վանքը, անշեղորեն հավատարիմ էին մնում ավանդական մոտիվներին։ Այս վաղնջամետ տենդենցը, ինչպես նաև այն փաստը, որ որոշ ձեռագրեր, հատկապես Ավետարաններ, կազմվել են մի քանի անգամ, դժվարացնում են թվագրման խնդիրը նույնիսկ այն դեպքերում, երբ կարելի է գտնել կազմարարների հիշատակարանները։ Միայն կազմարարական տեխնիկաների մասնագետը կարող է կառուցվածքի ուշադիր հետազոտության միջոցով պարզել այն կապը, որ գոյություն ունի այժմ ձեռագիրը պատող կողի և տեքստի ու նրա հիշատակարանների տարեթվի միջև։

Թվագրված մակագրություններ կրող կազմերն օգնում են լուսաբանելու այս խնդիրները, սակայն հնագույն մակագրություններով կազմերը, որ ես ցուցակագրել եմ, XVI դարից են. դրանք չորսն են։ Առաջինը 1565 թ. կազմ է, որ գտնվում է 1450-ին Արծկեռում՝ Վանա լճի մոտ ընդօրինակված մի Ընթերցարանի վրա. կազմի ստեղծման վայրը և կազմարարի անունը մնում են անհայտ[20]։ Երկրորդ կազմը պատրաստվել է 1581-ին ոմն Ղազար կազմարարի կողմից և գտնվում է 1477 թ. մի ձեռագրի վրա, որն ընդօրինակված է Ռշտունյաց գավառում։ Կազմարարի անունը գտնվում է վերի կողի վրա, սակայն տարեթիվը հայտնի է դառնում հիշատակարանի շնորհիվ. չնայած դրան, կազմի պատրաստման վայրը պարզ չէ[21]։ Երկու այլ կազմեր, պատրաստված ոմն Փիլիպոսի կողմից 1585 թ. (մեկը՝ 1304 թ. մի Ավետարանի համար, որի գրչության վայրն անհայտ է, մյուսը՝ 1586-ով թվագրված և նախատեսված Մոկաց գավառում 1452 թ. ընդօրինակված մի Ավետարանի համար), ունեն նկարազարդ և թվագրված կողեր[22]։ XVI դարի մակագրություններ կրող այս չորս կազմերը հիշատակվեցին մեկ առ մեկ, քանի որ դրանք այն եզակի հայկական օրինակներն են, որոնք վերաբերում են 1605 թ. Իրանում Իսպահանի արվարձաններից մեկի՝ հայկական քաղաք Նոր Ջուղայի հիմնադրմանը նախորդած ժամանակաշրջանին։ Այստեղ է, որ զարգացել է և կատարելագործվել մակագրություններով կազմերի արվեստը։

Երբ մենք ցուցակագրած և ուսումնասիրած կլինենք մեզ հասած բոլոր մակագրություններով կազմերը, կարող են պարզվել այդ տեխնիկայի ծագումը և այն վայրերը, որտեղ դրանք մուտք են գործել։ Հայտնի են մա-

---

* Գիլյոշ (ֆրանս. guilloche), հատվող գծերով կազմված զարդանախշ։ օգտագործվում է թանկարժեք մետաղների փորագրման մեջ (ծան. թարգմանչի)։

կագրություններով, թվագրված կազմեր և այլ՝ հայկականից տարբեր, ավանդույթներում, որոնք վերաբերում են առնվազն XV դարին[23]։ Այս ժամանակաշրջանից հետո այդ պրակտիկան տարածում է գտել Արևելքում և Արևմուտքում։ Քանի որ ես չեմ կարողացել ուսումնասիրել ձեռագրերի այն խումբը, որի աղբյուրը հանդիսացել են այս օտար ավանդույթները, առայժմ հնարավոր չէ ասել, թե դրանք ինչ ազդեցություն կարող էին ունենալ հայկական տեխնիկաների վրա։ Քանի որ XVI և XVII դդ. արևմտյան դրոշմամամլիչներն ու մոտիվները Հայաստանում սովորական էին դարձել, կարելի է նախանշել արևմտյան ազդեցության հնարավորությունը։ Այնուամենայնիվ, կազմերի վրա մակագրություններ թողնելու գաղափարը հայերի մոտ կարող էր և ինքնաբերաբար ծագած լինել՝ մեմորիալների նկատմամբ նրանց ունեցած հակման փաստից ելնելով։ Կասկած չկա, որ կազմերի վրա դրոշմամամլիչով արված մակագրությունների ի հայտ գալը կապված է տպագրության գյուտի հետ, քանի որ յուրաքանչյուր տառ ուներ իր հատուկ մամլիչը, ճիշտ ինչպես ձեռքով արվող շարվածքի դեպքում։ Հայ գրատպությունը զարգացում էր ապրում հենց XVI դարում՝ առաջին գրքերը տպագրվել էին Վենետիկում 1511—1513 թթ. միջև ընկած ժամանակահատվածում[24]։

Մակագրություններով հնագույն կազմը, որն աներկբայորեն ծագում է Նոր Ջուղայից, գտնվում է 1653 և 1658 թթ. միջև ընդօրինակված մի ձեռագրի վրա[25]։ Սակայն հայտնի են նույն այդ XVII դարի 20-ական թթ. վերաբերող յոթ կազմեր, որոնց մեծ մասը մակագրություններով է։ Դրանցից միայն երկուսն են ստեղծվել նույն այն ժամանակ, ինչ և տեքստը, մեկը՝ Գլաձորի վանքում, Հյուսիսային Հայաստանում, որը թվագրված է 1611 թ., մյուսը՝ Լեհաստանում, Կամենեց-Պոդոլսկում և թվագրված է 1619 թ.[26]։ Հինգ այլ կազմեր, թվագրված 1613—1619 թթ., կրում են կազմարարների անունները, սակայն դրանց պատրաստման վայրը մնում է անորոշ, բացառությամբ մեկի[27]։

Շատ հնարավոր է, որ կազմերի այս վերջին խումբը պատրաստված լինի Իսպահանում, կարող է նույնիսկ Նոր Ջուղայում։ Արաքսի ափին գտնվող հին քաղաք Ջուղան 1604 թ. ավերելուց հետո Շահ Աբբասը հայ բնակչությանը ստիպեց բնակություն հաստատել մայրաքաղաքի՝ Իսպահանի արվարձաններից մեկում, որը նա անվանեց Նոր Ջուղա։ Համարյա անմիջապես, 1607 թ. ի վեր, այստեղ ընդօրինակվել են նոր ձեռագրեր[28]։ Մի ձեռագիր, որն արդեն սկսված էր հին քաղաքում, ավարտվել է Նոր Ջուղայում արդեն 1605 թ.[29]։ Անշուշտ, դրանցից յուրաքանչյուրի համար կազմ էր հարկավոր։ Դժբախտաբար, այս կազմերը դեռևս ո՛չ հրատարակված են, ո՛չ ուսումնասիրված, հետևաբար հնարավոր չէ հաստատապես ասել, թե արդյո՞ք կազմերի վրա մակագրություններ դրոշմելու սովորույթն իրոք սկիզբ է առել Նոր Ջուղայում, XVII դարի կեսից առաջ։

Այնուամենայնիվ, XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին կեսին վերաբերող մակագրություններով հայկական կազմերի մեծամասնությունը, հազվադեպ բացառություններով, ծագում է կամ Նոր Ջուղայից, կամ Իսպահանից, կամ հարևան հայկական գյուղերից։ Ոմանք մատնանշում են արևմտյան ազդեցություններ՝ այս կազմերի վրա, հատկապես այն եվրոպական դրոշմամամլիչներին վերաբերող հարցերում, որոնք կիրառվել են կաշվի զարդարման մեջ հայերի համար ավանդական հանդիսացածների կողքին[30]։

Նախնական տվյալների ցուցակում (որտեղ ընդգրկված են մոտ 115 մակագրություններով հայկական կազմեր) տեղ գտածներից 53-ը ընդօրինակվել են և կազմվել ու մակագրվել Նոր Ջուղայում կամ, ավելի հազվադեպ, Իսպահանում, մինչդեռ 46 այլ կազմեր, որոնցից 8-ը պահվում են Նոր Ջուղայի վանքի գրադարանում, իրենց պատրաստման վայրի մասին հիշատակարաններում մատնանշում չունեն։ Մեր ցուցակի մակագրություններով

կազմ ունեցող մնացած 14 ձեռագրերը ծագում են այլ հայկական կենտրոններից, բայց միայն վեցն ունեն կազմեր, որոնք ժամանակակից են կոդեքսի ստեղծմանը՝ Ամստերդամ 1700, կազմը՝ 1703-ի, Կաֆա 1714, կազմը՝ նույն թվականի, Լվով 1758, կազմը՝ նույն թվականի, Սանկտ-Պետերբուրգ 1811, կազմը՝ 1814-ի, Շուշի 1831, կազմը՝ 1837-ի։ Մյուսներն Ամստերդամից են, Վենետիկից, Հալեպից, Երևանից, Աղթամարից և այլ վայրերից, բոլորն էլ վերստին կազմված հայտնի չէ որտեղ, բայց շատ հավանականորեն՝ Նոր Ջուղայում։

Ակնհայտ է, որ Իսպահանի այդ հայկական արվարձանում, ուր գերիշխում էր վաճառականների դասը, և, հետևաբար, արևմտյան կողմնորոշումը, կազմերի ստեղծման արվեստը մեծ ժողովրդականություն էր վայելում։ Կարելի է ենթադրել, որ մակագրություններով այն 46 կազմերի մեծ մասը, որոնց ծագման վայրը չի նշված հիշատակարանում, նույնպես հանդիսանում են Ջուղայի որևէ արհեստանոցի արտադրանքը։ XVII և XVIII դդ. մակագրություններով այս կազմերի վարելած ժողովրդականությունն այնքան մեծ էր, որ այստեղ ընդօրինակված ձեռագրերի 10 տոկոսից ավելին կրում էին գրանցից[31]։Ընդհանրապես, այս կազմերն ունեն վառ արտահայտված առանձնահատկություններ, և, հետևաբար, բավական հեշտ են ճանաչվում՝ կաշվի հաճախ բաց գույն, ավանդական հյուսվածապատ, պատվանդանով խաչի բացակայություն, սառը եղանակով արված զարդարանք՝ արևմտյան այնպիսի դրոշմամամլիչների օգտագործումով, ինչպիսիք են շուշանը*, Աստվածամայրը և խաչելությունները։

Վենետիկի Ս. Ղազարի հավաքածոյի յոթ մակագրություններով կազմերից վեցը Նոր Ջուղայից են կամ Իսպահանից։ Կան նաև առնվազն երեքը՝ Փարիզի Ազգային գրադարանի հայկական ֆոնդին պատկանող, և մեկը՝ Երևանի հարուստ հավաքածոյից, որն արդեն հրատարակված է։ Այս տասնըմեկ նմուշները ներկայացված են, ըստ ժամանակագրության, հետևյալ ցուցակում.

1. 1658 թ.։ Երևան, Մատենադարան, ձեռ. № 200։ Աստվածաշունչ, ընդօրինակված Նոր Ջուղայում Յոհաննէս դպիրի կողմից Պարոն Ավետիքի համար, 1653-ի և 1658-ի միջև[32]։ Մակագրությունը, ուղղանկյան տեսքով, սկսվում է վերի կողի վերևամասի ձախ անկյունից.

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՇՈՒՆՉՍ ԱՒԵՏԻՔԻՆ ԵՒ ԾՆՕՂԱՑՆ ՁԻՔ ՊԵՏՐՈՍԻՆ, ՄԷՐ ՏԱՏԻԿԻՆ ԵՒ ՈՐԴՈՅՆ՝ ԱՂԱՄԱԼԻՆ, ՊՕՂՈՍԻՆ ԵՒ ՄՕՐՆ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ։

Հիմնապաստառի վրա, Կույսի երկու կողմերում, կան հինգ կամ վեց տառեր, հավանաբար՝ ՄԱՐԻԱՄ, որոնք, սակայն, վատ են դուրս բերված[33]։

2. 1663 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. № 2143. Գիրք պարապմանց, Ժակ Մաթոսյանի նախկին հավաքածո, № 44։ Մակագրությունը, ուղղանկյան տեսքով, սկսվում է վերի կողի վերնամասի ձախ անկյունից.

ԳՐԵՑԱԻ ՁԵՌԱՄԲ Տ[Է]Ր ՅՈՀԱՆԻՍԻՆ 'Ի ՎԱՅԵԼՈՒՄ ԱՆՁԻՆ ԻՒՐ[Ո]Յ ԹՎ[ԻՆ] Ռ. Ճ. Ժ. Բ.

3. 1682 թ.։ Փարիզ, Ազգային գրադարան, ձեռ. arm. 245. բժշկական տրակտատների ժողովածու, ընդօրինակված Մարունանում, Իսպահանի մոտ, 1682-ին։ Մակագրությունը երկու տողով է, վերի կողի վերնամասում.

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ՀԱՔԻՄ ԱՐՆԱՍԻ ՀԱՔԻՄ
Տէր ՅԱԿՈԲԻՆ Թվին Ռ. Ճ. Լ. Ա. ԱՄԻՆ[34].

4. 1695 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. №

---

* Շուշան՝ (ֆրանս. fleur de lis). Ֆրանսիայում թագավորական իշխանության խորհրդանիշը, որ պատկերված էր ֆրանսիական թագավորների հին զինանշաններին (ծան. թարգմանչի)։

1351, Գրիգոր Տաթեւացի, Հարց ուսմանք, ընդօրինակված Շողում (այսինքն՝ Իսպահանում), 1695-ին[5]։ Մակագրությունը, ուղղանկյան տեսքով, սկըսվում է մեռի կողի վերնամասի՝ ձախ անկյունից.

ԳՐԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ Տ[Է]Ր ՄԸԿՐՏՉԻՆ Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է ԻՒՐՆ ԵՒ ՄՆՕ-ՂԱՑՆ ԱՂԱԹԵՂԷ ԵՒ ՄՕՐՆ ԱՆՆԱՅԷ Ի ԹՎԻՆ Ռ. Ճ. Խ. Դ. ԱՄԻՆ.

5. 1698 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. № 1485. Հաւազածոյ, ընդօրինակված Հայրապետի կողմից Շողում (Իսպահանում), 1669-ին։ Մակագրությունը զուգահեռ երիզների տեսքով է՝ վերի կողի մերևում և ներքևում.

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է Պ[Ա]Ր[Ո]Ն ՄԱՐՏԻՐՈՍԻ ՈՐԴԻ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱ-Տ[ՈՒ]ՐԷ ԹՎԻՆ Ռ. Հ. Խ. Է.

6. 1700 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, ձեռ. № 1527. Վարք Հարանց, արտագրված Նոր Ջուղայում, 1641-ին։ Մակագրությունը զուգահեռ երիզների տեսքով է՝ վերի կողի վերևում և ներքևում.

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է ՄՕՎՍԷՍ Վ[ԱՐ]ԴԱՊԵՏԻՆ [ԹՎ]ԻՆՆ Ռ. Ճ. Խ. Թ.

7. 1710 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. № 897։ Ուղղանկյան տեսքով արձանագրությունն սկսվում է վարի կողի վերնամասի ձախ անկյունից և շարունակվում է երեք ուղղությամբ։ Տարեթիվը գտնվում է հակառակ երեսին, հիմնապաստառի մեջտեղում գտնվող մեկ այլ երիզի վրա.

Ք[ՐԻՍՏՈՍ]Ի Ծ[Ա]Ր[Ա]Յ ՏԱՐԱԳՐԵԱԼ[36] ՄԱՀՏԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԹՎԻՆ ՓՐԿՉԻՆ Ռ. Է. Ճ. Ժ.

8. 1710 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. № 1571. Մաշտոց, ընդօրինակված, զարդարված և կազմված Տեր Խաչատուրի կողմից, Նոր Երևանում, Ս. Փրկչի և Ս. Ստեփանոսի եկեղեցիներում, 1704—1710 թթ. ընթացքում։ Ուղղանկյան տեսքով մակագրությունն սկըսվում է վերի կողի վերնամասի ձախ անկյունում և շարունակվում երեք ուղղությամբ.

ՅԻՇԱՏԱԿ է ՄԱՇՏՈՑՍ ՏԷՐ[37] ԽԱՉԱՏՈՒՐԻՆ ԵՒ ՈՐԴՈՑՆ, ԹՎԻՆ Ռ. Ճ. Ե. Թ.

9. 1715 թ.։ Փարիզ, Ազգային գրադարան, ձեռ. arm. 314 (նախկին supplement arm. 134)։ Քերականություն և տրամաբանական մի տրակտատ, գրված Սիմեոն Ջուղայեցու կողմից, ընդօրինակված Նոր Ջուղայի Ս. Փրկչի վանքում, 1715-ին։ Մակագրությունը, ուղղանկյան տեսքով, սկըսվում է վարի կողի ներքևից, ձախ անկյունից.

Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԴԱՆԻԷԼ ՍԱՐԳԻՍ Վ[Ա]Ր[Դ]Պ[Ե]Տ[Ա]ՅՆ Ռ. Ճ. Կ. Ե. ԹՎԻՆ[38].

10. 1729 թ.։ Փարիզ, Ազգային գրադարան, ձեռ. arm. 25 (նախկին supplément arm. 127)։ Ավետարան, ընդօրինակված Վենետիկում 1658-ին։ Ուղղանկյան տեսքով մակագրությունն սկսվում է վերի կողի վերնամասի ձախ անկյունից.

Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է Ս[ՈՒՐ]Բ ԱՒ[ԵՏԱՐԱՆ]Ս ՖԱՀՐԱՊԱՏՑԻ Ա[ՍՏՈՒԱ]-ԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԵՒ ԻՄ ԾՆՈՂԱՑՆ ԹՒԻՆ Ռ. Ճ. Հ. Թ. ՕԳ[Ո]ՍՏ[ՈՍ] Գ.[39].

11. 1787 թ.։ Վենետիկ, Մխիթարյան գրադարան, Ս. Ղազար, ձեռ. № 1708. Ավետարան, ընդօրինակված 1370-ին Թլակավանում (Եկեղյաց գավառ), Տարոնի եպիսկոպոս Յովհաննէսի կողմից։ Այն նորոգվել և վերստին կազմվել է Տեր Պետրոսի կողմից, Սեբաստիայում՝ ըստ վարի կողի հակառակ երեսին գտնվող հիշատակարանի[40]։ Մակագրությունները վերի և վարի կողերի վրա են, գտնվում են հիմնապաստառի կենտրոնում, խաչի տակ[41].

Վերի կող.
Տ[Է]Ր Պ[Օ]Ղ[ՈՍ]

Վարի կող.
ՌՄԼԶ

Այս մակագրությունների բովանդակությունից մենք տեղեկանում ենք, որ նրանց դերը փաստորեն պատվիրատու անձին և կամ այն սեփականատիրոջը հիշատակելն էր, որին, ավելի ուշ, պատկանել է ձեռագիրը։ Դրանք իրենց ժամանակվա մատենանիշներն էին (ex libris). օրինակ, ոմն վարդապետ Ալեքսանդր, 1698 և 1704 թթ. միջև, պատվիրել է առնվազն չորս ձեռագիր, որոնցից յուրաքանչյուրն ունի նրա անունը հիշատակող մակագրություններով կազմ[42]։

Ակնհայտ է, որ այս ձեռագրերը մեզ հնարավորություն են տալիս բացահայտելու Նոր Ջուղայում ուշ շրջանում գոյություն ունեցած մի արհեստանոցի, հնարավոր է նույնիսկ դպրոցի, առկայությունը։ Երբ նմուշների մեծամասնությունն ուսումնասիրված կլինի, հնարավոր կլինի պարզել այդ արհեստանոցի պրոֆիլը։

Առայժմ անհայտ է մնում այն ամենն, ինչ վերաբերում է Ջուղայի դպրոցին՝ արհեստանոցների թիվը, աշխատանքի պայմանները, աշխատանքի բաժանումն ըստ մասնագիտությունների։ Կազմերի մակագրությունները, ինչպես նաև ձեռագրերի հիշատակարանները, մեզ տեղեկացնում են, որ գրքի դործը եղել է Նոր Ջուղայի Ս. Փրկչի վանքի վանականների առանձնաշնորհը։ Ենթադրվում է, հավանաբար իրավացիորեն, որ կազմը պատրաստվում էր նրանց կողմից։ 1636-ին վանքում հիմնվել է Իրանում առաջին տպարանը, որը գործել է մինչև 1650 թ.։ Տպարանի կարիքների համար թուղթը, թանաքները և կազմը պատրաստվել են վանականների կողմից[43]։

Նոր Ջուղայի կազմարարներից աչքի է ընկնում առնվազն մեկը՝ Ազարիա անունով։ Հիշատակարանների շնորհիվ հայտնի է դառնում, որ առնվազն վեց թվագրված կազմեր, 1663—1698 թթ., կարող են նրան վերագրվել. վերջիններիս ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ նրան կարելի է վերագրել այլ կազմեր ևս, այս անգամ՝ չթվագրված։ Կարելի է նկատել նաև, որ որոշ կազմարարներ միաժամանակ նաև գրիչներ են եղել։ Երբեմն արհեստավորն իր սեփական անունն է թողել իր իսկ ձեվավորած կազմի վրա։

Չնայած այն հանգամանքին, որ XVII և XVIII դդ. ընթացքում մակագրություններով կազմեր պատրաստվել են նաև այլ վայրերում ու այլ լեզուներով (ռուսերեն՝ 1758-ին, Մոսկվայում), այս առանձնահատկությունը ակնհայտորեն հատկանշական է մնում Նոր Ջուղայի համար։

Իհարկե, Նոր Ջուղայի կազմերի ուսումնասիրությունը, մակագրություններով լինեն դրանք, թե առանց դրանց, կարող է լրացնել միայն հայ կազմարարական արվեստը ներկայացնող մի սահմանափակ խմբին վերաբերող բացը։ Սակայն վերջիններիս ունեցած շատ հստակ դեկորատիվ առանձնահատկությունները և այդքան ճշգրիտ վերագրումները հանգեցնում են նրան, որ անհրաժեշտ է ավելի խոր հետազոտություններ ծավալել այդ չուսումնասիրված բնագավառում։ Դրանց ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված մեթոդոլոգիան կարող է կիրառվել, սկզբնական շրջանում, նույն դարաշրջանի առանց մակագրության կազմերի համար, այնուհետև՝ ձեռագրերի բաղմաթիվ հիշատակարանների օգնությամբ պարզելու համար հնագույն արհեստանոցների գտնվելու վայրերը։ Մակագրություններով կազմերը հնարավորություն կտան պատրաստելու օգտագործված մոտիվների և դրոշմամամլիչների մի ժամանակագրական կատալոգ։

Հայկական կազմը չի սահմանափակվում միայն կաշվով։ Կան հարյուրավոր կազմեր, պատված արծաթե քանդակազարդ թիթեղներով, իսկ ավելի հազվադեպ՝ էմալապատ և կամ նկարներով զարդարված, որ ամրացված են ուղղակի կաշվի վրա՝ սրբապատկերների նման։ Մենք դեռ սպասում ենք, որ դրանց վերաբերյալ սիստեմատիկ հետազոտություն կատարվի։ Բացի այդ, հայկական կազմարարական ավանդույթի մի կարևոր կողմ, որ բացակայում է բյուզանդացիների մոտ, ներկայացված է կողերի հակառակ երեսները պատող գործվածքե կազմաստառների տեսքով։ Չնայած Լ. Դուռ-

նոժոյի և Ջ. Թառայանի աշխատություններին[14], անելու շատ բան է մնում, քանի որ անհրաժեշտ է հրատարակել այդ գործվածքների պատառիկները և պարզել այն երկրները, որտեղից դրանք ծագում են։

Ինչպես և հայկական ձեռագրերի ուսումնասիրության բոլոր մյուս բնագավառներում, այստեղ էլ հսկայական աշխատանք կա անելու։ Նախ, անհրաժեշտ կլինի մի հստակ մեթոդոլոգիա մշակել, այնուհետև հարկ կլինի գրապահոցների աշխատակիցների և հետազոտողների ուշադրությունը հրավիրել գրքի պատմության համար հայ կոդիկոլոգիայի ունեցած կարևորության վրա։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն ձեռնարկվել է Թոմաս Մաթյուսի կողմից (Նյու Յորքի Համալսարանի Գեղարվեստի ինստիտուտ). 1970-ական թթ. Ռոբերտ Ալլիսոնը՝ Չիկագոյի Համալսարանի Ռեգենստեյն գրադարանից, արդեն կատարել էր համանման մի հետազոտություն հիշյալ հավաքածոյի հայկական ձեռագրերի վերաբերյալ, որը երբեք չի հրատարակվել (1976, էջ 152—165)։

2. Գրվել է միայն մեկ ուսումնասիրություն՝ Գարեգին Հովսեփյանի կողմից (որն այդ ժամանակ Իրանում Նոր Ջուղայի արքեպիսկոպոսն էր), ընդհանուր բնույթի, բայց շատ կարևոր, վերնագրված՝ «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից», Հալեպ, 1930. 56 էջ, 21 պատկերներով։ Այս աշխատությունն ավելի շատ վերաբերում է արծաթե կազմերին։ Առաքելյանի հոդվածի համար նայել ստորև, ծան. 6։

3 Note sur quelques manuscrits arméniens avec reliures à inscriptions.—«Բանասեր», հունվար, 1905, էջ 14—20։ Մակլերն այստեղ վիճարկում է մակագրություններով կազմերի ներկայացրած ընդհանուր հետաքրքրությունը։

4. Տե՛ս ծան. 2։

5. La reliure arménienne.—«Բազմավեպ», 1953, № 8—10, էջ 200—204։ Հոդվածն ավելի շատ վերաբերում է կազմերի կառուցվածքին։

6 Կազմերի զարդարման արվեստը միջնադարյան Հայաստանում.—«Բանբեր Մատենադարանի», հ. 4, 1958, էջ 183—203, 15 պատկերազարդումներով։ Տե՛ս նաև նրա՝ Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հ. 1, Երևան, 1958, հատկապես կաշեգործության վերաբերյալ բաժինը (էջ 296—302), ինչպես նաև կազմարարության (էջ 316—321)։

7. Պեթերբրիջը զբաղվել է բյուզանդական և արևելյան կազմերի ուսումնասիրությամբ, իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես աշխատել եմ հայկական ձեռագրերի զարդարվեստի և մանրանկարների վրա։

8. Ցուցակը մնում է չհրատարակված։ Բովանդակությունը հետևյալն է. 1) ձեռագրի համարը, 2) գործվածքե աստառի առանձնահատկությունները, 3) սառը եղանակով դրոշմազարդումը և օգտագործված դրոշմամամլիչները, 4)հետաքրքիր մանրամասներ։

9. Inscribed Armenian Manuscripts Bindings in the Collection of the Mekhitarist Brotherhood of Venice, V Simposio Internazionale de Arte armena. Վենետիկ, 1988, մայիս—հունիս։

10. Տե՛ս Գարեգին Հովսեփյանի վկայակոչված հոդվածը։ Լավ պատկերազարդումներ կարելի է գտնել «Էջմիածնի գանձերում», Էջմիածին, 1984։

11. Քանի որ արծաթե կազմերը մեր ուսումնասիրության մաս չէին կազմում, մենք չենք պարզել դրանց ճշգրիտ թիվը։ Ըստ իմ մոտավոր հաշվումների Երևանի Մատենադարանի 11 000 ձեռագրերի 2,5—5 տոկոսը կրում են մետաղյա զարդարանքի այս կամ այն ձևը։

12. Բ. Առաքելյան. Կազմերի զարդարման արվեստը։

13. Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. №№ 4804, 3793, 275։ Բ. Առաքելյան. Կազմերի ..., էջ 185։

14. Նույն տեղում, էջ 183։

15. Ես կարծում եմ, որ այս ուղղանկյունը խորհրդանշում է Քրիստոսի գերեզմանի վրա դրված քարը։ Հին քրիստոնեական արվեստում այն հաճախ պատկերվում է, օրինակ, Հարության տեսարանում։ Երբ խաչը, որ գտնվում է վերի կողի վրա, խորհրդանշում է հաչելությունը, ապա ուղղանկյունը մեզ է ներկայացնում վերջինիս լրացումը՝ Հարությունը։ Ես հույս ունեմ մոտ ապագայում մի ուսումնասիրություն պատրաստել այս թեմայով։

16. ՄՄ, ձեռ. № 7735՝ 986 թ., ձեռ. № 283՝ 1033 թ., ձեռ. № 5747՝ X դար կամ ավելի առաջ, Վենետիկի ձեռ. № 1366՝ 1200 թ.։

17. Տե՛ս Բ. Առաքելյան. Կազմերի ....։

18. Այս դամերն արդյո՞ք ծառայում էին կաշին պահպանելուն՝ ըստ բյուզանդական ավանդույթի, թե՞ պարզապես դեկորատիվ բնույթի էին։ Հավանաբար երկուսը միասին։

19. Տե՛ս Բ. Առաքելյան, Կազմերի..., նկ. 7 և 8՝ Ղրիմի նմուշների համար։

20. ՄՄ, ձեռ. № 982։ Ցուցակ ձեռագրաց, հ. 1, Երևան, 1970, 451—2 հիշատակարաններ. այստեղ ասվում է, որ ձեռագիրը «փրկվել է» 1560 թ.։

21. Նոր Ջուղայի վանք, ձեռ. № 305, տե՛ս Simbat Ter-Avetissian. Katalog der Armenischen Handschriften in der Bibliotek des Klosters in Neu-Djoulfa. հայերեն՝ գերմաներեն վերնագրով, հ. 1, Վիեննա, 1970։

22. Համապատասխանաբար ՄՄ, ձեռ. №№ 4812 և 9841։

23. Տե՛ս Henri Bouchot. Les reliures d'art à la Bibliothèque nationale. Paris, 1888, p. VI. Հմմտ. Macler. Op. cit., p. 20.

24. Տե՛ս Raymond Kévorkian. Catalogue des „Incunables" arméniens (1511/1695) ou Chronique de l'imprimerie arménienne. Genève, 1986.

25. Վերի կողի վրայի մակագրությունը թվագրված չէ, բայց կա մի հիշատակարան, ուր խոսվում է կազմարարի մասին. ՄՄ, ձեռ. № 200, տե՛ս մանրամասն կատալոգի հ. 1։

26. Համապատասխանաբար ՄՄ, ձեռ. №№ 437 և 569։

27. 1617 թ. մի կազմ, պատրաստված Նատախի քահանա Դավթի կողմից, ՄՄ, ձեռ. № 6316, 1460 թ. մի Ավետարանի համար. մյուսներն են՝ 1613 թ., ՄՄ, ձեռ. № 1809, գրիչ Մարտիրոս. 1615 թ., ՄՄ, ձեռ. № 4004, ընդօրինակված Գանձասարում 1420 թ., գրիչ՝ Առաքել աբեղա. 1615 թ., ՄՄ, ձեռ. № 4949, XV դար, գրիչ՝ Ստեփաննոս. 1619 թ., Նոր Ջուղա, ձեռ. № 229, գրիչ Սիմեոն։

28. Նոր Ջուղայի վանք, ձեռ. № 153, Ավետարան, 105 և 105 ձեռագրերը ընդօրինակվել են Խսպահանում նույն թվականին։

29. Նոր Ջուղայի վանք, ձեռ. № 258, Ցայտաուրք։

30. Մակլերի կողմից հրատարակված 1723 թ. կազմը (նշվ. աշխ., էջ 15—16) ֆրանսիական տիպի է. այն կրում է Անրի III-ի ժամանակվա, այսինքն՝ 1520—1550 թթ. միջև կազմերն ընդօրինակող մի կազմ։ Հեղինակը ենթադրում է, որ դրոշմամամլիչները պատրաստվել են Ֆրանսիայում կամ Իտալիայում՝ պատվերով։

31. Այս վիճակագրության համար հիմք են ծառայել Նոր Ջուղայի վանքի հավաքածոյի ձեռագրերը. ձեռագրացուցակի առաջին հատորում ընդգրկված են 387 ձեռագրերից 35-ը (6 տոկոսը)։ Սակայն քանի որ ձեռագրերի մի մասն ունի այլ ծագում, քան Նոր Ջուղան, մեզ թվում է, որ 10 տոկոսը տրամաբանական թիվ է. Ter-Avetissian. Op. cit.

32. Տե՛ս Բ. Առաքելյան. նշվ. աշխ.՝ պատկերազարդման համար։ Արձանագրությունը հրատարակված է՝ Ս. Եդանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց. հ. 1, Երևան, 1984, հիշատակարան 809, նաև՝ Վ. Հակոբյան. Հայերեն ձեռագրերի XVII դարի հիշատակարաններ. հ. 3, (1641—1660), Երևան՝ 1984, № 1237/7, էջ 1658։

33. Նախորդ ծանոթագրությունում վկայակոչված երկու աշխատությունները չեն տալիս մակագրության այս մասը։

34. Ես վերականգնել եմ մակագրության տեքստն ըստ Ֆ. Մակլերի լուսանկարի՝ Miniatures arméniennes: Vies du Christ, peintures ornementales. Paris, 1913, pl. LXII, fig. 134. Գրչի հիշատակարանը նույն տեղեկությունները չի տալիս, ինչ որ կազմի վրայի մակագրությունը, ինչպես նշում է Մակլերը, էջ 42։

35. 564բ, 565, 565բ թերթերի հիշատակարաններ։

36. «Քրիստոսի ծառայ»-ին հաջորդող բառերը դժվար են հասկացվում։

37. Սկզբում կազմարարը դրոշմել է ՏՈՒՐ տառերը՝ Խաչատուր անվան վերջին մասը, հետո դրանց վրայից ավելացրել է Է տառ, թողնելով, սակայն, Ի-ը, այսպիսով ՏԷՐ-ի փոխարեն ՏԷԻՐ ստանալով։ Բ ա ր ս ե ղ Ս ա ր գ ի ս յ ա ն և Գ ր ի գ ո ր Ս ա ր գ ս յ ա ն. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց. հ. 3, Վենետիկ, 1966, № 422, հիշ. 557, տալիս են մակագրությունը, բայց չեն մատնանշում սխալը։

38. Ես հետևել եմ Ֆ. Մակլերի թարգմանությանը՝ „Note sur quelques manuscrits arméniens avec reliure à inscription", op. cit., p. 18, բայց կան մակագրության հայերենի հետ կապված որոշ հարցեր։ Ես դեռ չեմ ստուգել անմիջականորեն կազմը։

39. Ես հետևել եմ Ֆ. Մակլերի թարգմանությանը, նույն տեղում, էջ 16։ Ես դեռ չեմ ստուգել անմիջականորեն կազմը։

40. Բոլոր մանրամասների համար տե՛ս Բ ա ր ս ե ղ Ս ա ր գ ի ս յ ա ն. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց. հ. 1, Վենետիկ, 1914, № 187, հիշ. 777—782։

41. Վենետիկյան այս յոթերորդ կազմը շատ կոպտորեն է պատրաստված՝ ուռուցիկ պատկերներով, սև կաշվի մոտ։ Մեծ հակադրություն կա սրա և Նոր Ջուղայի մյուս կազմերի միջև, որոնք ավելի նրբագեղ են։

42. Այս ձեռագրերի տեքստերը մեծ մասամբ Աստվածաշնչի մեկնություններ էին և այլ ձեռնարկներ հոգևորականության համար։

43. Բացի այդ, քաղաքի հայ արհեստավորները, հատկապես ոսկերիչները, օգնում են պատրաստելու տպատառերի և գլխատառերի մայրատառերը (պուանսոն), ժամլամայրերը (մատրիցա) և կաղապարները». տե՛ս K ê v o r k i a n op. cit., p. 114. Տպարանը վերականգնվել է 1687-ին, մեկ տարով, նույն տեղում, էջ 122։

44 Л. Д у р н о в о. Армянская набонка. М., 1953. Երևանի Մատենադարանի ձեռագրերը հավաքածոյի աստառների ճշգրիտ պատճենների՝ 82 չրաներկ նկարների մի ալբոմ. տեքստ համարյա չկա։ З. Р. Т а р а я н. Набойка в Армении. Ереван, 1978. Ընդգրկում է ծավալուն տեքստ, զարդվածքների պատառիկների 14 լուսանկար՝ Երևանի նույն հավաքածոյից։ Մատենագրությունը ի նկատի ունենալ նաև «Форзацы» գլուխը՝ И. Д р а м п я н, Э. К о р х м а з я н. Художественные сокровища Матенадарана. Ереван, 1976, с. 152—165.

ПЕРЕПЛЕТЫ С НАДПИСЯМИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

ТИГРАН КУЙМДЖЯН (Париж)

Р е з ю м е

Среди разнообразных переплетов, характерных для армянских рукописей, исследована особенно одна их разновидность—кожаные переплеты с тиснеными на них надписями. Основываясь на сведениях, которые можно почерпнуть из памятных записей писцов или переплетчиков, делается вывод, что в позднесредневековый период (в XVII—XVIII вв.) в Новой Джульфе существовала целая школа переплетного дела с уже сложившимися традициями.